

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- N ----- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1670-Ն , 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 630-Ն, 2004
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 631-Ն, 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 632-Ն
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 562-Ն

ՈՐՈՇՄԱՆ

ՄԵՋ ՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի «Հրանտ Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1670-Ն որոշման 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր դ) ենթակետով.

«դ) գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքում ստացված գյուղատնտեսական մթերքների իրացում՝ լիազոր մարմնի համաձայնությամբ:»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 630-Ն որոշման 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր գ) ենթակետով.

«գ) գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքում ստացված գյուղատնտեսական մթերքների իրացում՝ լիազոր մարմնի համաձայնությամբ:»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» պետական ոչ

առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 631-Ն որոշման 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր գ) ենթակետով.

«գ) գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքում ստացված գյուղատնտեսական մթերքների իրացում՝ լիազոր մարմնի համաձայնությամբ:»:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 632-Ն որոշման 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր գ) ենթակետով.

«գ) գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքում ստացված գյուղատնտեսական մթերքների իրացում՝ լիազոր մարմնի համաձայնությամբ:»:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 562-Ն որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Թույլատրել «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) գյուղատնտեսական քնագավառի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների ուսումնական պրակտիկաների կազմակերպում,

բ) գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքում ստացված գյուղատնտեսական մթերքների իրացում՝ լիազոր մարմնի համաձայնությամբ:»:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: